Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի

Թիվ 1 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՈՒսուցիչ՝ Ալյոնա Հովսեփյան

Ղեկավար՝ Ա. Խալաթյան

Եղեգնաձոր 2023

Բովանդակություն

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 3

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 8

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն 12

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ 13

4. А. Скотникова Учитель – ученик – родитель: взаимоотношения 13

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<<Երբեք մի կասկածեք, որ իրենց գործին նվիրված մարդկանց մի փոքր խումբ կարող է փոխել աշխարհը>>:

Մարգարեթ Միդ

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորող կարևոր գործոններից մեկը «ուսուցիչ-ծնող» փոխհամագործակցությունն է, ինչը հնարավորություն է տալիս առավել լավ ճանաչել երեխային և նրա առանձնահատկությունները: «Ուսուցիչ-ծնող» փոխհամագործակցության դրական արդյունքը ուսումնական պրոցեսում երեխայի ակտիվ ներգրավումն է, ինչպես նաև երեխայի կողմից սովորելու գործընթացը հետաքրքիր,արդյունավետ գործընթաց դարձնելը:

Երեխայի ուսումնական մոտիվացիայի ձևավորման և ուսումնական գործընթացում ներգրավման համար «ուսուցիչ-ծնող» փոխհարաբերությունների միջոցով անհրաժեշտ է հասկանալ աշակերտի խնդիրները տանը և դպրոցում, լինել օրինակ երեխայի համար՝ հատկապես կրտսեր դպրոցական տարիքում, խրախուսել երեխային ՝ իր ուսումնական հաջողությունների համար, լինել երեխայի կողքին. օգնել երեխային, միասին հաղթահարել ուսումնական գործընթացում առաջացած խնդիրները՝ չմոռնալով «ծնող-ուսուցիչ» համագործակցության մասին:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը:

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը

հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:

Թեստերի միջոցով պարզել,թե որքանով է այսօրվա ծնողը ճանաչում իր երեխային,գիտի՞ արդյոք,թե ինչ նախասիրություններ ունի իր երեխան,որն է

իր սիրելի հերոսը,ինչով է սիրում զբաղվել և այլն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին կրտսեր և միջին դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:

. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

.Ինչպե՞ս ապահովել դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցում:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը:

«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում երեխայի ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները երեխաների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը:

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: «Ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով,

ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնողուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա: Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար:

Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա: Ծնող(ներ)ի հետ համագործակցությունն անհրաժեշտ է ուսուցչի՝ աշակերտի հետ աշխատանքն ամբողջացնելու նպատակով: Մեծաքանակ աշակերտներով դասարան(ներ)ում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը /և ոչ միայն/՝ անկախ նրա

առաջադիմությունից, ակտիվությունից : Վերադառնալով ուսուցչի և ծնողի համագործակցությանը՝ հավելենք, որ ուսուցիչ-ծնող կապն աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպման կարևորագույն բաղադրիչ օղակներից է: Մենք ունենք մեկ ընդհանուր նպատակ՝ կրթել, դաստիարակել, զարգացնել երեխային, ուստի մեր փոխհամագործակցությունը և միմյանց հետ մշտական կապ պահպանելը բխում է հենց այդ նպատակի իրագործումից, երկու կողմերի շահերից, բայց ոչ, երեք կողմերի շահերից. չմոռանանք աշակերտին, որն այս ողջ գործընթացի կենտրոնն է, այն կենտրոնը, որի շուրջ պտտվում է մնացյալ ամեն բան:

Կրթված և գիտելիքներով զինված սերունդ դաստիարակելիս ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը նախ և առաջ աշակերտի ուսումնական առաջադիմությունն է: Ուր ուսումնական առաջադիմությունը, այնտեղ՝ գնահատականը: Ցանկացած ուսուցիչ բախվել է ու բախվելու է այդ հարցին՝ ծնողական եսասիրություն՝ իր երեխան լավագույնն է, նա արժանի է առավելագույն գնահատականի, իսկ ուսուցիչը կողմնապահություն է անում…

Ծնողը չպետք է երեխայի ներկայությամբ քննարկի դպրոցը, ուսուցչին: Նա, իհարկե, կունենա իր ճիշտ կամ սխալ կարծիքը, որը, անկեղծ ասած, տվյալ դեպքում առաջնային չէ: Աշակերտի ներկայությամբ քննարկելով, փնովելով դպրոցը, այս կամ ուսուցչին՝ ծնողը միայն փչացնում է իր երեխայի հոգեբանությունը, խոչընդոտում է սեփական երեխայի ճիշտ աշխարհընկալումը:

Ոչ երկրորդական պլանում է մաքրության պահպանումը,տարատեսակ հարցերում նրբանկատության,սրտացավության, հոգածության դրսևորումը: Նստարանների, առհասարակ դպրոցական գույքի, դասարանի, շրջապատի նկատմամբ հոգածություն պիտի դրսևորի յուրաքանչյուր աշակերտ, և սանի մեջ դրա սերմանումը ևս պետք է սկսել տանից և սեփական օրինակով: Այս ամենին կա մեկ լուծում՝ աշխատե՛նք միասին:

Դրական արձագանքը կարևոր է երեխայի աճի և զարգացման համար: Ուսուցիչները պետք է ծնողներին տրամադրեն դրական արձագանքների հնարավորություններ՝ ճանաչելով իրենց երեխայի ձեռքբերումներն ու ջանքերը: Դա կարելի է անել ծնող-ուսուցիչ կոնֆերանսների ժամանակ գովասանքի միջոցով կամ էլ-նամակներով, որոնք ընդգծում են երեխայի առաջընթացը:
Մանրամասն և, ամենակարևորը, կառուցողական արձագանքները կարող են դրդել երեխային շարունակել քրտնաջան աշխատել և խթանել հպարտության և ինքնագնահատականի զգացում:
Ավելին, դրական արձագանքները կարող են ստեղծել ուսուցիչների և ծնողների միջև համագործակցության զգացում, ինչը հանգեցնում է ավելի լավ ակադեմիական և սոցիալական արդյունքների երեխայի համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դպրոցի և ծնողների համագործակցային աշխատանքները կարող են իրականացվել ինչպես խմբային (ծնողական ակումբներ,խմբային խորհրդատվություններ,խնդիրների քննարկումներ, բաց դռների օր,ծնողական դասախոսություններ,ծնողական ժողովներ,փորձի փոխանակման ծրագրեր,հարց ու պատասխանի երեկոներ) այնպես էլ անհատական

(անկետավորումներ,խորհրդատվություններ,տնայցեր,զրույց հիշեցման թերթիկներ,գործնական աշխատանքներ,հեռախոսազրույցներ) ձևերով:

Իմ առջև դրված այն խնդիրը՝ թե որքանով է յուրաքանչյուր ծնող ճանաչում իր երեխային,ես լուծեցի հարցաթերթիկների միջոցով,որոնք կազմել էի թե՛ աշակերտ-ների,և թե՛ ծնողների համար:Հարցաթերթիկը պարունակում է ինը հարց, և նույն բովանդակությամբ է:

Հարցաթերթիկը լրացրել են Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի 4-րդ Բ դա-սարանի 27 աշակերտներն ու իրենց ծնողները:Ե

Ես այնպես կազմակերպեցի, որ հարցաթերթիկը լրացվի նույն օրը,որպեսզի արդյունքը ակնառու և ճշմարիտ լինի:Դրա համար դասղեկի ժամին հարցաթերթիկը լրացրեցին աշակերտները,և նույն օրը հրավիրել էի ծնողական ժողով,որտեղ իրենց հարցաթերթիկների հարցերին պատասխանեցին ծնողները:Իսկ երբ ավարտեցին աշխատանքը, ուղղակի անակնկալի եկան,երբ բաժանեցի իրենց երեխաների պատասխանները:

Բոլորը համեմատեցին իրենց պատասխանները երեխաների պատասխանների հետ: Ամեն կողմից լսվում էին հետևյալ արտահայտությունները՝ <<Ախր իմ տղան միշտ այս խաղն էր խաղում,այստեղ լրիվ ուրիշ խաղ է գրել,որի մասին ես չգիտեմ>>, <<Մինչև անցյալ տարի իմ տղայի սիրելի հերոսը Հարրի Փոթերն էր,էստեղ գրել է Սասունցի Դավիթ>>,<<Իմ աղջիկը միշտ ասում էր,որ երազում է բժշկուհի դառնալ, բայց այսօր իմացա, որ ծրագրավորող է ուզում դառնալ>> և այլն:

Շատ հետաքրքիր էր արդյունքը, երբ մանրամասն ուսումնասիրեցի ծնողի և երեխայի հարցաթերթիկները միասին:

27 աշակերտներից ընդամենը 2 ծնողի պատասխանն էր,որ համընկավ իրենց երեխայի պատասխանի հետ:

11 ծնողի 4 – 5 հարցի համընկնում էր երեխայի պատասխանի հետ,մնացածը սխալ էր:

9 ծնող 2 – 3 հարցի էր ճիշտ պատասխանել:

2 ծնող 1 հարցի էր ճիշտ պատասխանել:

3 ծնողի ոչ մի պատասխան չհամընկավ իր երեխայի պատասխանի հետ:

Սա մտածելու տեղիք տվեց և ինձ, և այդ ծնողներին:

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ
/ աշակերտի համար/

1.Ո՞րն է քո ամենասիրած հեքիաթը:

---

2. Ո՞րն է քո ամենասիրելի գեղարվեստական Ֆիլմը:

---

3. Ո՞րն է քո սիրելի մուլտֆիլմը:

4.Ո՞ր հեռուստահաղորդումն ես սիրում և դիտում:

---

5. Ո՞վ է քո ամենասիրելի հերոսը և ինչու՞:

6.Ի՞նչ խաղ ես սիրում խաղալ համակարգչով:

---

7. Ինչի՞ց ես ամենաշատը վախենում :

---

8. Ինչպիսի՞ մարդ կցանկանայիր դառնալ:

---

9. Ի՞նչ ես երազում դառնալ: _____

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

/ ծնողի համար/

1. Ո՞րն է Ձեր երեխայի ամենասիրած հեքիաթը:

---

2. . Ո՞րն է Ձեր երեխայի ամենասիրած գեղարվեստական ֆիլմը:

---

3. . Ո՞րն է Ձեր երեխայի ամենասիրած մուլտֆիլմը:

---

4. . Ո՞րն է Ձեր երեխայի ամենասիրած հեռուստահաղորդումը:

---

5. Ձեր երեխայի ամենասիրելի հերոսը:

---

6. . Ձեր երեխայի ամենասիրելի համակարգչային խաղը:

---

7. Ձեր երեխայի վախերը, ինչի՞ց կցանկանայիք պաշտպանել Ձեր երեխային: _____

_____

8.Ի՞նչ որակներ կուզիք սերմանել Ձեր երեխայի մեջ:

---

9. . Ո՞րն է Ձեր երեխայի երազանքը: _____

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այսպիսով, երեխայի ներդաշնակ զարգացման և դաստիարակության համար շատ կարևր է ամուր և անընդհատ պահել սովորող – ուսուցիչ – ծնող կապը: Ելնելով իմ կատարած հետազոտության արդյունքներից՝ ես եկա այն եզրակացության, որ այսօրվա ծնող-երեխա կապը ինչ-որ տեղ պետք է ամրացնի ուսուցիչը՝ հաճախակի կազմակերպելով ծնողական ժողովներ,զրույցներ և երկխոսություններ: Պարզվում է, որ այսօր ծնողները շատ լավ գիտեն իրենց իրավունքները,

բայց դժվարությամբ են կատարում իրենց պարտականությունները:

Կարծում եմ,որ ուսուցիչ – ծնող սերտ համագործակցության դեպքում միայն կարող ենք երեխայի դաստիարակությունն և ուսումնառությունը արդյունավետ դարձնել:Եվ քանի որ երկու կողմերի նպատակը նույնն է, բոլոր խնդիրները պետք է լուծել միասին, ճիշտ ժամանակին՝ ի շահ աշակերտի:

Ի վերջո, երեխայի հետազոտման, նրա կարողությունների, հմտությունների և դժվարությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի համագործակցության միակ շարժառիթն այդ երկու կողմերի ընդհանուր հետաքրքրություններն ու շահերն են:

Ուսուցիչը պետք է կարողանա իր և ծնողի միջև ստեղծել բարոյահոգեբանական կայուն և վստահելի միջավայր,լինի փոխադարձ հարգանք, որպեսզի վերոնշյալ բոլոր գործընթացները լինեն արդյունավետ:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ջոն Մարշալ <<Ծնողի և ընտանիքի ներգրավվածության քաղաքականություն>>

2021_2022

2.Ջոն Հոլթ <<Մանկական հաջողությունների երաշխիքը>>

3. Վ. Դ. Սեմյոնով <<Փոխազդեցություն դպրոցի և սոցիալակն միջավայրի միջ>>

4. А. Скотникова Учитель – ученик – родитель: взаимоотношения